ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ N 309-Ա
« 28 » ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2023Թ.
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻՆ ՊԱՐԳԵՎԱՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 219-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, «Տարածքային կառավարման մասին» օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, «Հանրային ծառայության մասին» օրենքի 9-րդ հոդվածի 19-րդ մասով, «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» օրենքի 16-րդ հոդվածի 11-րդ մասի 4-րդ կետով, «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» օրենքի 6-րդ հոդվածի 6-րդ մասով, 22-րդ հոդվածի 10-րդ մասով, ՀՀ կառավարության 2014 թվականի հուլիսի 3-ի «Պետական իշխանության մարմիններում քաղաքացիական աշխատանք կատարող և տեխնիկական սպասարկում իրականացնող անձանց պաշտոնային դրույքաչափերը սահմանելու մասին» N 737-Ն որոշման 3-րդ կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2022թ. դեկտեմբերի 29-ի թիվ 1550-Լ որոշմամբ հաստատված թիվ 9 հավելվածի 19-րդ կետի 24-րդ ենթակետը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Հայաստանի Հանրապետության 2023 թվականի պետական բյուջեով հաստատված Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզպետի աշխատակազմի «Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ» հոդվածի խնայված միջոցներից աշխատանքային պարտականությունները բարեխիղճ և որակյալ կատարելու համար ՀՀ Վայոց ձորի մարզպետի աշխատակազմի աշխատակիցներին պարգևատրել համաձայն հավելվածի:
2. Որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Recoverable Signature

Signed by: KOLYA MIKAELYAN 3507670100

Կ. ՄԻՔԱԵԼՅԱՆ

ք.Եղեգնաձոր